Հավելված N 3

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024թ.

սեպտեմբերի 11-ի N 2284-Լ հրամանի

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Չափորոշիչ		Այո	Ոչ	Մեկնաբանություն
1. ԱՄՓՈՓԱԳԻՐ				
Արդյո՞ք հիմնական տեղեկատվությունը ներկայացված է (ծրագրի անվանումը, ծրագրի ոլորտը և այլն):				
Արդյո՞ք ծրագրի իրագործելիությունը և ընտրված ներդրումային տարբերակը ներկայացված են հստակ ձևով:				
2. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ				
2.1. Առկա համատեքստի վերլուծություն				
2.1.1.	Արդյո՞ք ծրագրի սոցիալ-տնտեսական համատեքստի համապարփակ գնահատումը ներկայացված է (մակրոտնտեսական պայմանները, սոցիալական դինամիկան և այլն):			
	Արդյո՞ք համապատասխան ոլորտի ներկա վիճակի և միտումների վերլուծությունը ներկայացված է:			

	Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
	Արդյո՞ք կազմակերպչական կառուցվածքը, որի շրջանակներում կգործի ծրագիրը, հստակ նկարագրված է:			
	Արդյո՞ք ներկայացված տվյալները համապատասխանում են ծրագրի շրջանակին (բաժին 3.4):			
2.1.2.	Արդյո՞ք ներկայացված է ծրագրի նպատակների և կառավարության միջազգային պարտավորությունների (օրինակ՝ Ազգային մակարդակով սահմանված գործողություններ), ինչպես նաև կառավարության (կամ համայնքային) ռազմավարությունների և քաղաքականության միջև փոխկապակցվածությունը:			
	Արդյո՞ք ծրագիրը համահունչ է ներկայացված համապատասխան ոլորտային ռազմավարություններին (առկայության դեպքում):			
2.1.3.	Արդյո՞ք ծրագրի իրավասու մարմինը և շահագործող կազմակերպությունը մանրամասն նկարագրված են, ինչպես նաև ներկայացված է վերջինիս իրավական կարգավիճակը:			
	Արդյո՞ք նշված են կողմերի միջև պայմանագրային պարտավորությունները՝ սակագները, ծառայությունների դիմաց վճարների հավաքագրումը, սուբսիդիաները (կիրառելի լինելու դեպքում):			
2.2. Ծրագրի կարիքների վերլուծություն				
2.2.1.	Արդյո՞ք ծրագրի անհրաժեշտությունը, ներառյալ ենթակառուցվածքի հիմնական պահանջները և կարիքները, որոնց լուծմանն է միտված ծրագիրը, հստակ հիմնավորված են և ուղեկցվում են քանակական և որակական տվյալներով:			
	Արդյո՞ք ծրագրի շահառուները ներկայացված են: Արդյո՞ք ներկայացված են վերջիններիս վերաբերյալ համապատասխան թվային տվյալներ:			

	Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
2.2.2.	Արդյո՞ք ապագա պահանջարկը կանխատեսված է ծրագրի ողջ կենսացիկլի համար և արդյո՞ք կանխատեսումը համապատասխանում է վերլուծության հաշվետու ժամանակաշրջանին:			
	Արդյո՞ք պահանջարկի վերլուծությունը կատարվել է ծրագրի «առանց ներդրումների» և «ներդրումներով» սցենարների համար:			
	Արդյո՞ք պահանջարկի կանխատեսման հիմքում ընկած ենթադրությունները հստակ ներկայացված են:			
2.3. Նպատակներ և ակնկալվող արդյունքներ				
2.3.1.	Արդյո՞ք ծրագրի նպատակները հստակ ներկայացված են:			
	Արդյո՞ք բացահայտված խնդիրների և ծրագրի նպատակների, ինչպես նաև բացահայտված խնդիրների և առաջարկվող լուծումների միջև կա հստակ կապ:			
	Արդյո՞ք ծրագրի նպատակները ներկայացված են քանակական տեսքով, եթե դա իրագործելի է:			
2.3.2.	Արդյո՞ք ծրագրի միջանկյալ արդյունքները հստակ և ճիշտ են սահմանված (արդյո՞ք դրանք համահունչ են ծրագրին և ենթադրում են շոշափելի արդյունքներ):			
	Արդյո՞ք ծրագրի վերջնական արդյունքները ներկայացված են հստակ և ճիշտ (արդյո՞ք դրանք վերաբերում են ծրագրին և ծրագրի կայուն օգուտներին):			
3. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅՈՒՆ				
3.1. Ծրագրի իրականացման այլընտրանքներ				
Արդյո՞ք հստակ ներկայացված է ծրագրի առնվազն երեք տարբերակ, ներառյալ «առանց ներդրումների» և «ներդրումներով» 2 տարբեր սցենարներ: Եթե դիտարկվում է միայն մեկ				

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
ներդրումային տարբերակ, արդյո՞ք տարբերակների թվի սահմանափակման որոշումը բավարար չափով հիմնավորված է:			
3.2. Ծրագրի այլընտրանքների գնահատման մեթոդներ			
Արդյո՞ք նկարագրված և հիմնավորված են ծրագրի այլընտրանքների գնահատման համար օգտագործվող մեթոդները:			
3.3. Այլընտրանքների գնահատում			
Արդյո՞ք տարբերակների գնահատման տրամաբանությունն ու չափորոշիչները հստակ ներկայացված են:			
Արդյո՞ք ծրագրերի այլընտրանքները համեմատվում և գնահատվում են՝ ընտրված չափորոշիչների հիման վրա:			
Արդյո՞ք կլիմայի փոփոխության հետ կապված չափորոշիչը (չափորոշիչները) ներառված են այլընտրանքների գնահատման մեջ:			
3.4. Արդյունքների ներկայացում			
Արդյո՞ք ծրագրի նախընտրելի տարբերակը հստակ բացահայտված և նկարագրված է (ծրագրի շրջանակը):			
Արդյո՞ք նախընտրելի տարբերակի ընտրությունը բավարար չափով հիմնավորված է:			
Արդյո՞ք ծրագիրն անդրադառնում է կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն առնչվող հարցերին (կիրառելի լինելու դեպքում՝ հիմնված կլիմայի ռիսկի գնահատման վրա):			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
3.5. Ծրագրի տեխնիկական իրագործելության գնահատում			
Արդյո՞ք դաշտային հետազոտության արդյունքներն ամփոփ ձևով ներկայացված են (կիրառելի լինելու դեպքում)			
Արդյո՞ք ծրագրի նախնական նախագիծը հստակ նկարագրված է (ներառյալ ծրագրի տեխնիկական և ոչ տեխնիկական բնութագրերը):			
Արդյո՞ք ծրագրի շահագործման և պահպանման ամփոփ պլանը ներկայացված է:			
Արդյո՞ք առաջարկվող տեխնոլոգիաները քննարկվում են տեղական պայմաններին վերջիններիս համապատասխանության տեսանկյունից:			
Արդյո՞ք հիմնավորված է ծրագրի նախնական նախագծի համապատասխանությունը կարգավորման և պլանավորման դաշտի պահանջներին:			
Արդյո՞ք ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները (օրինակ՝ հողերի ձեռքբերում և թույլտվություններ և այլն) հստակ ուրվագծված են:			
Արդյո՞ք այս բաժնում ներկայացված են կլիմայի հարմարվողականության և աղետներին դիմակայելու միջոցառումները (կիրառելի լինելու դեպքում):			
Արդյո՞ք այս բաժնում նկարագրված բոլոր ուսումնասիրությունները և նախագծային փաստաթղթերը կցված են ՏՏՈՒ-ին:			
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ			
4.1. Մեթոդներ և ենթադրություններ			
Արդյո՞ք ֆինանսական վերլուծության մեջ կիրառվող մեթոդներն ու ենթադրությունները նկարագրված և հիմնավորված են: Արդյո՞ք դրանք համահունչ են ՏՏՈՒ-ի մեթոդաբանական հավելվածում ներկայացված պահանջներին:			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
4.2. Ծրագրի ներդրումային ծախսեր			
Արդյո՞ք ծրագրի բոլոր բաղադրիչների ծախսերի նախահաշիվները ներկայացված են ծրագրի բյուջեում:			
Արդյո՞ք ներդրումային ծախսերը մանրամասն ներկայացված են, և արդյո՞ք դրանք հիմնված են շուկայի վերլուծության վրա:			
4.3. Ծրագրի իրականացման ֆինանսական հոսքերի ժամանակացույց			
Արդյո՞ք ժամանակացույցը հստակ ներկայացնում է ծրագրի իրականացման փուլում ծրագրի կոնկրետ բաղադրիչների համար ծախսերի բաշխումը:			
Արդյո՞ք ֆինանսական հոսքերի ժամանակացույցը համապատասխանում է ծրագրի շրջանակին և ծախսերին:			
4.4. Գործառնական ծախսեր և եկամուտներ			
Արդյո՞ք վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ծրագիրը եկամտաբեր է:			
Արդյո՞ք եկամուտների հոսքերի գնահատման մեթոդաբանությունը հստակ նկարագրված է:			
Արդյո՞ք ապագա եկամուտները համեմատվում են ՍԲԳ սցենարի հետ:			
Արդյո՞ք գնահատումից պարզ է դառնում, որ կանխատեսվող եկամուտները ծածկում են գործառնական ծախսերը:			
Արդյո՞ք կա .xlsx ձևաչափով առանձին աշխատանքային փաստաթուղթ՝ գործառնական ծախսերը և եկամուտները ներառող՝ ՏՏՈՒ-ի հավելվածի հաշվետու ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարվա համար մանրամասն տեղեկատվությամբ:			
Արդյո՞ք այս բաժնում ներկայացված տվյալները համահունչ են 2-րդ գլխում և .xlsx աշխատանքային փաստաթուղթում ներկայացված պահանջարկի կանխատեսումներին:			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
4.5. Ֆինանսական ցուցանիշներ			
Արդյո՞ք ֆինանսական ցուցանիշները (ՖՁՆԱ, ՖՇՆԴ) ՏՏՈՒ-ում ճիշտ են հաշվարկված և ներկայացված: Արդյո՞ք դրանք համապատասխանում են .xlsx աշխատանքային փաստաթղթով ներկայացված հաշվարկներին:			
4.6. Ծրագրի ֆինանսավորումը և ֆինանսական կայունությունը			
Արդյո՞ք փաստաթղթում նշված են ֆինանսավորման աղբյուրները, որոնք ծածկում են ծրագրի ընդհանուր արժեքը:			
Եթե նախատեսվում է արտաքին ֆինանսավորում, արդյո՞ք ՏՏՈՒ-ն տեղեկատվություն է տրամադրում ֆինանսական հաստատությունների հետ խորհրդակցությունների կամ նախնական համաձայնագրերի կնքման մասին:			
Արդյո՞ք ՏՏՈՒ-ին կից աշխատանքային փաստաթուղթը պարունակում է առանձին աղյուսակ՝ ֆինանսական կայունության վերլուծության վերաբերյալ: Եթե այո, արդյո՞ք այն պատրաստվել է ՏՏՈՒ-ի ուղեցույցներում (ՏՏՈՒ-ի մեթոդաբանական հավելվածում) ներկայացված կանոններին համապատասխան:			
Արդյո՞ք ծրագրի ֆինանսական կայունության մասին վերլուծությունը ներառված է ՏՏՈՒ-ում: Արդյո՞ք այն համապատասխանում է .xlsx աշխատանքային փաստաթղթին:			
5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ			
5.1. Ծախս-օգուտ վերլուծություն			
Արդյո՞ք վերլուծության մեջ օգտագործված սոցիալական դիսկոնտավորման դրույքի ընտրությունը հիմնավորված է:			
Արդյո՞ք ֆիսկալ և գնային ճշգրտումները նկարագրված և հիմնավորված են (կիրառելի լինելու դեպքում):			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
Արդյո՞ք ոչ շուկայական ազդեցությունները, տնտեսական ծախսերն ու օգուտները և արտաքին գործոնները գնահատելու համար օգտագործվող մեթոդներն ու ենթադրությունները մանրամասն նկարագրված և հիմնավորված են:			
Արդյո՞ք տնտեսական վերլուծության մեջ կիրառվող մեթոդներն ու ենթադրությունները համահունչ են ՏՏՈՒ-ի ուղեցույցներում (ՏՏՈՒ-ի մեթոդաբանական հավելվածում) ներկայացված մոտեցմանը:			
Եթե ակնկալվում է ջերմոցային գազերի արտանետումների ավելացում (նվազում), արդյո՞ք տնտեսական վերլուծության մեջ ներկայացված է դրա դրամական հաշվարկը:			
5.2. Ծախսեր և օգուտներ			
Արդյո՞ք ներկայացված են այն ծախսերն ու օգուտները, որոնք չեն արտահայտվել դրամական տեսքով:			
Արդյո՞ք դրամական արտահայտությամբ չներկայացված ծախսերի և օգուտների հիմքում ընկած ենթադրությունները հիմնավորված են:			
5.3. Տնտեսական վերլուծության արդյունքները			
Արդյո՞ք տնտեսական ցուցանիշները (ՏԶՆԱ, ՏՇՆԴ) ճիշտ են հաշվարկված և ներկայացված: Արդյո՞ք դրանք համապատասխանում են .xlsx աշխատանքային փաստաթղթով ներկայացված հաշվարկներին:			
Արդյո՞ք բաժինը ներառում է տնտեսական վերլուծության արդյունքների քննարկումը և ներկայացումը:			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ			
6.1. Սոցիալական ազդեցության գնահատում			
Արդյո՞ք ծրագրի հիմնական սոցիալական ազդեցությունները և վերջինիս ազդակիր խմբերը բացահայտված են:			
Արդյո՞ք քննարկվում է այդ ազդեցությունների աստիճանը և տևողությունը: Արդյո՞ք նկարագրված են բացասական ազդեցությունների մեղմման միջոցառումները:			
Արդյո՞ք առկա է սոցիալական ազդեցությունների մոնիթորինգի պլան ծրագրի իրականացման ողջ ընթացքի համար (կիրառելի լինելու դեպքում):			
Արդյո՞ք այս բաժինը տրամադրում է տեղեկատվություն հանրային լսումների, շահագրգիռ կողմերի հետ անցկացված խորհրդակցությունների և դրանց արդյունքների մասին:			
6.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում			
Արդյո՞ք բաժինը տրամադրում է տեղեկատվություն ծրագրի՝ շրջակա միջավայրի պահպանության համապատասխան ռազմավարություններին և քաղաքականությանը համահունչ լինելու մասին:			
Արդյո՞ք այս բաժինը տրամադրում է տեղեկատվություն ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) անհրաժեշտության մասին: Եթե այո, ապա արդյո՞ք ամփոփված են ՇՄԱԳ արդյունքները: Եթե ՇՄԱԳ չի պահանջվում, արդյո՞ք նկարագրված են շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունները:			
Արդյո՞ք, հնարավորության դեպքում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները ներկայացված են քանակական արտահայտությամբ:			
Արդյո՞ք ներկայացված են էական բացասական ազդեցությունների համար նախատեսված մեղմման միջոցառումներ:			

	Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
6.2.1.	Արդյո՞ք քննարկվում է ծրագրի ազդեցությունը կլիմայի փոփոխության վրա՝ ջերմոցային գազերի արտանետումների համատեքստում:			
	Արդյո՞ք ենթաբաժինը տրամադրում է տեղեկատվություն ածխաթթվացման և կլիմայի փոփոխության հարմարվողականության տեսանկյունից ծրագրի՝ ազգային և (կամ) ոլորտային ռազմավարություններին և պլաններին համահունչ լինելու մասին:			
	Արդյո՞ք ներկայացված են ծրագրի նախագծում ներառված կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումներ:			
	Արդյո՞ք այս բաժնում քննարկվում է ծրագրի հարմարվողականութունը կլիմայի փոփոխության նկատմամբ տարբեր կլիմայական սցենարների ներքո: Արդյո՞ք քննարկումը համահունչ է կլիմայական ռիսկի գնահատման արդյունքներին:			
7. ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ				
7.1. Զգայունության վերլուծություն				
Արդյո՞ք քննարկվում են զգայունության վերլուծության արդյունքները:				
Արդյո՞ք ֆինանսական և տնտեսական ցուցանիշների վրա ազդող հիմնական պարամետրերը վերհանված են և համահունչ են ծրագրի առանձնահատկություններին, վերջինիս ոլորտին և թիրախային օգտվողներին:				
Արդյո՞ք զգայունության վերլուծությունն իրականացվել է ՏՏՈՒ-ի ուղեցույցների համաձայն:				
Արդյո՞ք վերլուծվել են տարբեր սցենարներ, այդ թվում՝ բազային, վատատեսական և վատագույն սցենարները:				

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
7.2. Ռիսկերի հիմնական աղբյուրների բացահայտում և ազդեցությունների գնահատում			
Արդյո՞ք ռիսկերը դասակարգվում են ըստ իրենց բնույթի և ծրագրի կենսացիկլի փուլի, երբ կարող են առաջանալ:			
Արդյո՞ք ռիսկերը ներկայացված են հստակ, ներառյալ դրանց առաջացման հավանականությունը, ազդեցության աստիճանը և ռիսկի ընդհանուր մակարդակը:			
7.3. Ռիսկերի կառավարում և ռիսկերի մեղմում			
Արդյո՞ք ռիսկերի մեղմման և կանխարգելման հատուկ միջոցառումները նկարագրված են:			
Արդյո՞ք յուրաքանչյուր ռիսկի կառավարման համար պատասխանատու կողմերը հստակ սահմանված են:			
Արդյո՞ք մնացորդային ռիսկը գնահատված և ներկայացված է աղյուսակում:			
8. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ			
8.1. Ծրագրի իրականացման ժամանակացույց			
Արդյո՞ք ծրագրի իրականացման ժամանակացույցը հստակ ներկայացված է, ներառելով հիմնական գործողությունները և դրանց իրականացման ժամանակացույցը:			
Արդյո՞ք քննարկվում են այս գործողությունների ավարտի հետ կապված անորոշությունները և խնդիրները:			
Արդյո՞ք ծրագրի իրականացման ժամանակացույցը համահունչ է նախորդ գլուխներում ներկայացված տեղեկատվությանը:			
Արդյո՞ք ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է որևէ իրավական ակտի ընդունում կամ այլ իրավական փաստաթղթեր, թույլտվություններ, համաձայնագրեր և այլն: Արդյո՞ք դրանց հնարավոր ազդեցությունը քննարկվում է:			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
8.2. Գնումների պլան			
Արդյո՞ք գնումների պլանը համահունչ է ծրագրի բաղադրիչներին և ժամանակացույցին:			
Արդյո՞ք գնումների պլանը համապատասխանում է գնումների վերաբերյալ համապատասխան օրենքներին և կանոնակարգերին:			
Արդյո՞ք մրցութային փաստաթղթերի պատրաստման, մրցույթի հայտարարման, առաջարկների ներկայացման և պայմանագրի շնորհման համար նախատեսված են համապատասխան ժամկետներ:			
Արդյո՞ք ներկայացված գնումների գործընթացը բաց է, արդար և թափանցիկ:			
8.3. Ծրագրի իրականացման մեխանիզմները և ռեսուրսները			
Արդյո՞ք համապատասխան իրավասու մարմնի և շահագործող կազմակերպության՝ ծրագիրն իրականացնելու հնարավորությունները (ֆինանսական, տեխնիկական, իրավական, վարչական կարողությունների տեսանկյունից) ներկայացված են:			
Արդյո՞ք ներկայացվում է ծրագրի իրավասու մարմնի և շահագործող կազմակերպության՝ նմանատիպ ծրագրերի իրականացման փորձը:			
Արդյո՞ք հիմնական դերերը, պարտականությունները և լիազորությունների շրջանակը հստակ նկարագրված են:			
Արդյո՞ք առկա են դրույթներ առաջընթացի մշտադիտարկման և հաշվետվությունների ներկայացման համար՝ ծախսերը և ժամանակի գերազանցումները կառավարելու համար:			
Արդյո՞ք արտաքին փորձագետների կամ ընկերությունների դերերը հստակ նկարագրված են և ներառված են ծախսերի գնահատման մեջ (կիրառելի լինելու դեպքում):			
Արդյո՞ք ծրագրի ավարտի և հանձնման միջոցառումները ներկայացված են:			

Չափորոշիչ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
8.4. Գործառնական կառավարման մեխանիզմներ			
Արդյո՞ք ենթակառուցվածքը շահագործող կազմակերպությունը հստակ նշված է:			
Արդյո՞ք քննարկվում են շահագործող կազմակերպության հնարավորություններն ու վերջինիս հզորացման անհրաժեշտությունը:			
Արդյո՞ք հիմնավոր ձևով ներկայացված է շահագործող կազմակերպության՝ գործառնական ծախսերի կատարելու ֆինանսական կարողությունը (կիրառելի լինելու դեպքում):			
Արդյո՞ք ներկայացված է գործընթացները նոր ենթակառուցվածք տեղափոխելու անցումային պլանը (կիրառելի լինելու դեպքում):			